# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

—

Սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսած ժառանգաբար կաթողիկոսութիւն էին անում նրա որդիները: Այսպէս Լուսաւորչի վերջին շառաւիղը եղաւ Ս. Սահակը, որը Մեծն Ներսէսի որդին էր: Սա Բիւզանդիոնի մէջ ուսել էր հելլենական դպրութիւնը: Շատ խելօք, առաքինի, բարեպաշտ, իր հօր նման հայրենեաց ցաւը զգացող և ուսման լոյսի տարածման համար խորհող ու աշխատող մարդ էր: Սա զգում էր հայոց տառերի բացակայութիւնը և մըտածում էր նրանց գտնելու մասին:

Իսկ Մեսրոպը Տարօն գաւառի Հացեկաց գիւղից՝ Վարդան անունով մի բարեպաշտ մարդու որդի էր, որը աշակերտել էր Մեծն Ներսէսին և իր բարի ուսուցչի պէս լաւ վարժուած էր նաև զինուորական արհեստի մէջ: Սա շատ լաւ գիտէր Յունաց, Ասորոց և Պարսից լեզուները ու ամեն գործում շատ ընդունակ և աշխատասէր էր: Ներսէսի կենդանութեան ժամանակ Մեսրոպը նոտար էր (գրագիր) հայրապետական գործերի, իսկ նրա մեռնելուց յետոյ՝ մտաւ արքունի դիւանին ատենադպիր և մնաց մօտ եօթը տարի:

Երբ Սահակ Պարթև կաթողիկոս է դառնում, Մեսրոպն էլ թողնելով իր ազատ ու երջանիկ կեանքը՝ դառնում է վարդապետ: Սա էլ Սահակի պէս մըտածում է հայերէն գրեր գտնելու մասին: Ուստի վարդապետ դառնալով թողնում է նստակեայ կեանքը և անցնում Գողթան և Սիւնեաց գաւառները ու սկսում աստուածային ուսումն ուսուցանել այն տեղերի վայրենաբարոյ ժողովրդին: Ս. Մեսրոպը տեսնելով, որ հայերէն տառեր չլինելու պատճառով մեծ դժուարութիւն է լինում, յայտնում է Ս. Սահակին ու այս բանին մի ճար անելու համար խորհրդակցում են ուսումնասէր Վռամշապուհ թագաւորի ու ուսումնական մարդկանց հետ և այս մասին ժողով կազմում Վաղարշապատ մայրաքաղաքում:

Ժողովի մէջ թագաւորը ասում է, որ ինքը լսել է. թէ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ կան հայերէն նշանագրեր*), ուստի հարկ է համարում մի բանիրուն մարդ ուղարկել և խնդրել այդ նշանագրերը: Ժողովն էլ տեսնելով, որ նպատակայարմար է, իր կողմից խնդրում է թագաւորին շուտով մարդ ուղարկել:

Վռամշապուհ, որ Ս. Սահակից ու Մեսրոպից պակաս չէր ցանկանում սեփական տառեր ունենալը, իր իմաստուն և խելացի իշխաններից Վահրիճ անուն մէկին որոշում է, որը թագաւորից և եպիսկոպոսներից յանձնարարական նամակներ ստանալով՝ գնում է նախ Միջագետք ու այնտեղից էլ Հաբէլ անուն ուսումնական քահանայի

---

*) Թէ հին ժամանակները. այն է՝ Քրիստոսից առաջ եղել են հայոց գրեր. ճիշտ է. բայց թէ քանի հնչիւն. այդ որոշ չէ: Բայց շատերն են ասում, որ Ագաթանգեղոսը. որը Տրդատի Արքունիքում պաշտօնեայ էր. գրել է Տրդատի և Գրիգոր Լուսաւորչի համառօտ պատմութիւնները —«Ագաթանգեղոս» վերտառութեամբ հայերէն և յունարէն լեզուներով: Սրանք Ս, Սահակից ու Մեսրոպից մօտաւորապէս մի դար (100 տարի) առաջ են եղել:

հետ միասին գնում են Դանիէլ եպիսկոպոսի մօտ։

Սա էլ հայոց այդ հին նշանագրերը, որը իր մօտ էր և թւով 22 հատ էին, տալիս է նրանց, որոնք այդտեղ հնչմունքները սովորելուց յետոյ վերադառնում են Հայաստան ու ներկայացնում թագաւորին։

Վերջիններս ստանալով տառերը, թագաւորի խորհրդով շատ մանուկներ են ժողովւում և սկսում ուսուցանել բերւած գրերով։

Երկու ամբողջ տարի անընդհատ աշխատեցին սովորեցնելու, բայց աշխատանքները զուր անցան՝ տառերի թերութիւնների պատճառով,

Ս. Մեսրոպ փորձով տեսնելով, որ այդ չը յաջողւեց, ինքը անձամբ գնաց Միջագետք Դանիէլ եպիսկոպոսի մօտ, յուսալով՝ որ պակասը կարող է գտնել կամ լրացնել։ Բայց այնտեղ էլ բաւական ժամանակ մնալով, տեսաւ որ ըսպասած օգուտը չստացաւ, իր աւագագոյն աշակերտները՝ Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացին հետն առած ուղևորւեց Եդեսիա քաղաքը՝ Պղատոն անունով հանճարեղ մարդու մօտ։

Պղատոն Մեսրոպի հետ երկար խորհրդակցելուց յետոյ տեսնելով՝ որ իր կարողութիւնից վեր է, խորհուրդ է տալիս նրան գնալ Փիւնիկէ իր վարժապետ Եպիփանոսի մօտ։

Մեսրոպը յանձնարարական նամակներ ստանալով Պղատոնից ու Ռուբեղա կամ Բաբելաս անուն եպիսկոպոսից՝ գնում է Փիւնիկէ և տեսնում, որ Եպիփանոս արդէն վախճանւել է։ Նա առանց յուսահատւելու դիմում է Սամոսատ քաղաքը, ուր մեծ գիտնականի հռչակ էր վայելում Եպիփանոսի աշակերտ Յոյն Հռոփանոսը։

Այդ տեղն էլ անօգուտ է դառնում։ Ուստի Մեսրոպ մարդկային հնարագիտութիւնից յոյսը կտրած, ապաւինում է Աստուծոյ զօրութեանը։

Մեր նախնիք պատմում են, որ Մեսրոպ առանց մի այլ բանի վրայ մտածելու՝ միշտ աղօթում էր առանձնացած ու Աստուածանից օգնութիւն խնդրում։ Այդ մտածման միջոցին ոչ նրա աչքերը տեսնում և ոչ ականջները լսում էին։ Նա ոչ արթուն էր և ոչ քնած, ու ահա այդ դրութեան մէջ տեսնում է իր առաջ մի քար, որի վըրայ մի աներևոյթ մարդու թաթ գըրում է եօթ ձայնաւոր տառերը։

Այսպէս Աստուծոյ ազդեցութեամբ տառերի ձևերը սպաւորւում են Ս. Մեսրոպի սրտում և անչափ ուրախացած դառնում է Հռոփանոսին պատմում, վերջինս էլ գրի առնելով գեղեցիկ ձևերի է դարձնում։ Քիչ ժամանակից Մեսրոպ տեսնելով տառերի գրեթէ բոլորովին պատրաստ լինելը, թարգմանում է Ս. Գրքից Առակաց գիրքը և տեսնելով, որ կատարեալ յաջողւած է, անսահման ուրախութեամբ շտապում է Հայաստան։

Երբ Ս Սահակը և թագաւորը լըսում են տառերի գտնելը ու Մեսրոպի գալը, մեծ բազմութեամբ գնում են ընդ առաջ և Ուռհ գետի ափին պատւով ընդունում և բերում Վաղարշապատ։

Այնուհետև թագաւորը հրաման է տալիս Ս. Սահակի միջնորդութեամբ ուսումնարաններ հիմնել, մանուկներ

ծաղկել ու սկսել ուսուցումը զուտ հայկական գրերով։

Մեսրոպ թագաւորից ու հայրապետից հրաման առնելով անցնում է Մարաստան, Գողթն և Շարիթ իշխանի ձեռնտւութեամբ սկսում է քարոզել և սովորեցնել։ Գողթնից էլ անցնում է Սիւնեաց աշխարհը, ուր լաւ օգնութիւն են հասցնում նրան Սիւնական Վասակ և Վաղինակ իշխանները։ Քիչ ժամանակից յետոյ այդտեղից գնում է Վրաստան, ներկայանում է Վրաց Բակուր թագաւորին և Մովսէս եպիսկոպոսին, որոնք մեծ պատւով ընդունում են և խնդրում իրենց համար էլ տառեր գտնելու։

Ս. Մեսրոպ այդտեղ Վրաց համար էլ տառեր հնարելուց և նրանց համար կարգաւորելուց յետոյ վերադառնում է Հայաստան և սկսում զանազան կողմերում քարոզել և ուսուցանել։

Վերջապէս, այդ երրորդութիւնը—թագաւորը, Ս. Սահակ հայրապետը և Մեսրոպը ձեռք ձեռքի տուած բազմաթիւ ուսումնարաններ բացին ու վերջին երկուսը գրել կարդալը սովորեցրին։ Եկեղեցական գրքերը, որ մինչ այդ ժամանակ յունարէն ու ասորերէն էին, թարգմանեցին հայերէն, սկսեցին հայ եկեղեցիներում հայերէն երգել և հայերէն կարդալ։

Ժողովուրդը, որ մինչև այդ միջոցը եկեղեցի գնալով բան չէր հասկանում, այնուհետև հասկացաւ և շատ ուրախացաւ։

Բացի այդ աշխատութիւնները Ս. Սահակը մեր լեզուով շատ շարականներ գրեց և յօրինեց շարականների ութը ձայն՝ քաղցրահնչիւն եղանակները, մինչև այսօր էլ երգւում են մեր հայ եկեղեցիներում։

Ս. Սահակը և Մեսրոպը իրենց աւելի յառաջադէմ աշակերտների հետ թարգմանեցին բացի ս. գրքից նաև ուրիշ շատ օգտաւէտ գրքեր։

Սրանք իրենց յառաջադէմ աշակերտներին ուղարկում էին այն ժամանակւայ մեծ և լուսաւորուած քաղաքները, որպիսիք են Կ. Պօլիս, Աղէքսանդրիա, Ասորիք և Աթէնք, ուր հռչակաւոր դպրոցներն էին և այնտեղ մօտ եօթ տարի մնում էին, լաւ սովորում Հայաստանի ուսումնածարաւ զաւակները, վերադառնում իրենց քաղցր հայրենիքը. դառնում քահանայ, վարդապետ, եպիսկոպոս և սկսում լուսաւորել ու պայծառացնել մեր աշխարհը։

Սրանք հայերէն գրերով նոր գրքեր էին գրում, թարգմանում էին զանազան ընտիր գրուածքներ, քարոզում ու սովորեցնում—լուսաւորում էին ժողովրդին։ Սրանք բոլորը մեր հարազատ, երանելի և իմաստուն վարդապետներն են, որ եղան մեր Հայ եկեղեցու փառքը և վայելչութիւնը, հայ ազգի պարծանքի պսակը, մեր գրականութեան և լեզուի օրէնսդիրները և հաստատողները, այնպէս որ սրանցով այդ հինգերորդ դարը կոչեցաւ Հայոց գրականութեան ոսկէ դար։ Սրանք երևացին ինչպէս լուսապայծառ աստղեր այնպիսի ժամանակում, երբ կռապաշտութեան և կրակապաշտութեան խաւարը պատել էր մեր աշխարհը Պարսից բռնակալութիւնից։ Ոչ մի ժամանակ մեր աշխարհը այնքան առաջ չէր ընթացել ու լուսաւորւել, որքան այդ ժամանակ։

Ս Սահակի մեռնելուց յետոյ ազգի համաձայնութեամբ կաթողիկոս եղաւ Մեսրոպ, որը միայն վեց ամիս վարեց հայրապետութիւնը։

Ս. Սահակ և Մեսրոպ կոչւեցին Թարգմանիչներ, Ս. Գիրքը և այլ գրքեր թարգմանելու համար։

Մեսրոպ կոչւեց նաև Մաշտոց, որովհետև նա յօրինեց ու կարգաւորեց «Մաշտոց» կոչւող Ծիսարան գիրքը։

Ս. Մեսրոպ վախճանւեց Վաղարշապատում, մեհեկան ամսի 13-ին. մեհեկանը համապատասխանում է փետրւար ամսին, ուրեմն 439 թւի փետրւարին։

Սուրբ վարդապետի աշխարհային մնացորդները ամփոփելու համար վէճ է ծագում. ոմանք ուզում են նրա նշխարները թաղել իր բնագաւառ Տարօնում, ոմանք Գողթն գաւառում, ուր նա քարոզել էր առաջին անգամ, ոմանք էլ ուզում են Վաղարշապատում թաղել. բայց յաղթող է հանդիսանում հայոց աշխարհի հազարապետ Վահան Ամատունին, որ սրբի մարմինը շքեղ հանդիսաւորութեամբ տանում է իր սեփական Օշական գիւղը և այնտեղ հողին յանձնում։

Թէ որչափ առաքինի և սուրբ մարդու հռչակ էր վայելում ս. Մեսրոպն իր ժամանակակիցների մէջ, պարզ երևում է Մովսէս Խորենացու այն վկայութիւնից՝ թէ ազատ խաչի նշանով լոյս շողաց այն տան վրայ, ուր երանելին հոգին աւանդեց և Օշականի ճանապարհին լուսոյ այդ շողքը շարունակ դագաղի վրայ էր, մինչև գերեզման իջեցնելը։

Օշական գիւղը, ուր, ամփոփւեցաւ ս. Մեսրոպի մարմինը, գտնւում է ս. Էջմիածնից դէպի հիւսիս. մօտ երկու ժամ հեռաւորութեամբ Վաղարշապատից. այժմ այդ գիւղը Մայր աթոռի սեփական կալւածական գիւղերից մէկն է և մօտ 300 տուն բնակիչ ունի։ Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ արդէն Վահան Ամատունին մի հոյակապ եկեղեցի էր կառուցել, որ 1639 թւին նորոգեց Փիլիպպոս կաթողիկոսը։ Իսկ այժմեան փառահեղ, սրբատաշ քարից շինած տաճարը կառուցեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը՝ Ռուսաստանի հայոց նւէրներով, 1879 թւ. Եկեղեցու սեղանի վէմ քարի տակ գետնում այրի մէջ է ամփոփւած ս. Մեսրոպի, մեր ազգային գրի ու գրականութեան հիմնադրի խնկելի աճիւնը։

Տասն եւ հինգ դար շարունակ որքան արցունք է թափել այդ սուրբ հողակոյտի վրայ, որքան սիրտ յուզւել, որքան ծունկ չոքել և որքան շըրթունքներ են շփւել այդ՝ ամբողջ հայութեան հետ անքակտելի կերպով կապւած անմոռանալի շիրիմին։ Որքան տարբեր զգացմունքի արտայայտութիւններ են եղել այդ արցունքները նայելով թէ ո՞ր դարում և ինչ ժամանակ են ցօղել դրանք սրբի դամբարանը. կայ արցունք ուրախութեան և ցնծութեան, կայ և վշտի ու թշւառութեան։

Ս. Սահակի և Մեսրոպի անունները հինգերորդ դարի սկզբից մինչև մեր օրերը անբաժան է հայ գրականութիւնից և դարձեալ անբաժան կմնայ, մինչև որ վերջին հայն հայերէն «ամէն»ով կփչէ իր վերջին շունչը։

«Պատմ. Զրոյց»